

370

3K23

U-85

1924

2010

4 200 71

11

Ն. Լ Ե Ն Ի Ն

ՅԵՐԻՏԵՍԵՐԻԱԿԱՆ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խ Ն Պ Ի Բ Ն Ե Ր Ը

329-154
L/35

3K73
Ե-85
№ 26
պ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՈՅԵ Գ

ԿՈՄՄՈՆԻՏԵՆ ԳՐԱԳՈՐԾՆ

№ 26

Ն. Լ Ե Ն Ի Ն

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը

(1370
38)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ո. Կ. ՅԵ. ՄԻՈՒՐԿԱՆ ԱՆԿԵԼՈՎԿԱՍԻ
ՅԵԿԵՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ.


ՍՍՏՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՈՐԾՆ
1924-ՍՍՏՀ
ՀԱՅԿ-ՍՍՏՀ
ՍՍՏՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՈՐԾՆ
1924-ՍՍՏՀ

(1370
38)

31854-4 2

ԱՆԵԱՏԵՆԷ ԱՆԿՈՆ ԱՅՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ,
ՎՈՐԻՆ ԻՐ ԱՄԲՈՂՋ ԿՅՈՆԵՐ ԵՎ ԻՐՅ ԻՒԲՉ, ՅԵՎ
ՊԱՏԲԱՍ ԼԻՆԵՐ ԵՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՏԱ-
ՂԻ ԿՈՒՂՆԵՐԻ-ՄԵՐ ՄԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՏ-
ԳԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

15005-58



Վ. ՈՒԼՅԱՆՈՎ—ԼԵՆԻՆ

1870—1924

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐՑՍՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ
Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ
ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ**

Հունվարը 21-ին վախճանվեց Վլադիմիր Իլիչը: Ամբողջ աշխարհի հարստահարվածների բախտի, Խորհրդային Հանրապետությունների Միության վիճակի մասին անընդհատ հոգացողության, հսկայական աշխատանքների ծանրության տակ, վախճանվեց պրոլետարիատի մեծ առաջնորդը և ուսուցիչը:

Մենք կորցրինք, մեր պարազլիին, անվեհեր և աննկուն պայքարողին և իմաստուն ուսուցչին: Չկա, այլևս այն ուսուցիչը, վորի վրա եյին սեռոված պրոլետարիատի բարեկամների և թշնամիների աչքերը, վորի յուրաքանչյուր խոսքի համաձայն բանվորական զործի համար կովի եյին ընթանում, տասնյակ միլիոններով ուս, արևմտյան բանվորներն ու գյուղացիները, և արևելքի ճնշված աշխատավորները: Չկա այլևս այն ուսուցիչը, վորը տասնյակ տարիներ կրթում, և մեկը մյուսի յեանից կովի եր առաջնորդում Ռուսաստանի բանվոր դասակարգի սերունդներին: Չկա նա, ով մեր սերնդի ձեռքը տվեց իր պայծառ մտքի, բանվոր դասակարգին անձնվիրությունը ծառայելու և հեղափոխություն հաղթանակի համար մեռնելու պատրաստակամու-

Թյան սուր զենքը: Նրա մահվան լուրը լսելով շարա-
խինդ հրճվում են մեր թշնամին—համաշխարհային բուր-
ժուղական: Խոր վշտով համակված են հարյուր միլ-
լիոնավոր աշխատավորների հարստահարվածների օրը-
աները: Բայց այս ծանր սրերին մեր շարքերում հու-
սահատու թյուն յեւ լքում չկա:

Յերիտասարդ բանվորներ!

Իլիչը առաջնորդեց պրուլետարիատին զեպի հոկ-
աւմերդյան հաղթանակը:

Իլիչի զեկավարութեան տակ Խորհրդային Ռու-
սիանութեան մեջ ձեզ համար ճանապարհ բացվեց զե-
պի գիտութեան, զեպի մասնակցութեան նոր կյանքի
շինարարութեան և կովին: Կոմերիտիութեան շուրջը
համախմբված բանվոր յերիտասարդութեանը նրա հետ
միասին պետք և պայքարի և սովորի: Պրոլետարիատի
յերիտասարդ սերունդը պետք և դառնաւ լենին-
ցիների սերունդ:

Յերիտասարդ գյուղացիներ!

Իլիչի և բուլշեիկյան կուսակցութեան զեկավար-
ութեամբ գյուղացիութեանն արտաքսեց կալվածատե-
ւերին և խլեց նրանցից հողերը: Բազաքացիական կռիւ-
ների ծանր տարիներին, Իլիչի ձեռքով զեկավարվող
Խորհրդային Ռուսիանութեանը պաշտպանեց կալվածա-
աներից ցարական զեներալներից գյուղացիներին
պատկանող հողը:

Բանվորների և գյուղացիների անքակտելի միու-
թեան միջոցով, գյուղի և քաղաքի մշտական փոխադարձ
օգնութեամբ Իլիչն առաջնորդեց ձեզ զեպի լավագույն
կյանքը: Բանվոր յերիտասարդութեան հետ և նրան

համահավասար դուք հնարավորութեանն ստացաք
գիտութեան և կուլտուրային ձգտելու հնարավոր-
ութեանը, բանվոր յերիտասարդութեան հետ միա-
սին դուք պիտի պայքարեք սովորութեան և խավարի
դեմ, համախմբեք կոմերիտիութեան զբողի տակ
ամրապնդեք բանվորների և գյուղացիների կապը
և դրանով իրականացնենք Իլիչի գործը:

Պոմմունիստ յերիտասարդներ!

Իլիչը մեր մեջ պատկաստեց բուսն ստելութեան
զեպի բնութեան և ստրկացման հասարակութեանը:
Նա մեզ ներշնչեց երկաթի կամք՝ այդ հասարակու-
թեանը հիմնովին քանդելու և կոմունիստ ստեղծելու:
Իլիչը մեզ սովորեցրեց զեպի հաղթութեանն տանող տա-
տակոտ և խորզուրօք ճանապարհին յերբեք չհօգնել
չընկճվել ու չը տատանվել: Իլիչը չկա: Բայց կոմուն-
իստական կուսակցութեանը, հիմնվելով բանվորների
և գյուղացիների անբաժան միութեան վրա, իր շար-
քերն ընդունելով մեր միջից նորանոր հազարավոր յե-
րիտասարդ լենինականներ, կը շարունակի, և կիրակա-
նացնի նրա անմահ գործը:

Սեղմեցեք շաքերը մեր կուսակցութեան շուրջը
Համառ և անդուլ կերպով սովորելով սնվենք
հին, բուլշեիկյան գվարդիայի փորձառութեամբ:
Պոմմը և դարձնենք մեր շարքերում լենինական-
ների անհաղթելի բանակը:

Ռուսաստանի կոմերիտիութեան կենտրոնական
կոմիտեի պնևում:

ԿՈՍԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՆԴԻԿՈՎ-
ԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ-
ԹՅԱՆ

Մեռավ Լենինը:

Հունվարի 21-ին իր մահկանացուն կնքեց աննման
հեղափոխականը, համաշխարհային պրոլետարական հե-
ղափոխութեան մեծագույն առաջնորդը:

Մեռավ այն մարդը, վորը յերկար տարիներ
առաջնորդում էր բանվոր դասակարգն ամբողջովին դե-
պի հաղթութուն՝ ստրկական շղթաներից ազատագր-
վելու, վորի վրա էյին սեեռել հարավի և հյուսիսի,
արևելքի և արևմուտքի, բոլոր հարստահարված աշխա-
տավորներն իրենց հայացքները, վորպես ազատարար
հեղափոխական կովի դրոշակի վրա:

Մեռավ Իլիչը, վորն իր ամբողջ կյանքում, իր
ամբողջական եռությամբ պայքարում էր կոմունիստա-
կան ապագայի համար, վոր մինչև որս չտեսնված հե-
ղափոխական բոցերի ու թնդյունների մեջ զրեց Սո-
ցիալիստական Սոցիալային Հանրապետությունների
մեծ միութեան հաստատուն հիմքը, մեռավ կոմունիս-
տական հզոր Ինտերնացիոնալի հիմնադիրը:

Մեռավ Լենինը:

Մեծագույն ցավով, անսահման վշտով, խոր սգով
են արտահայտվում այդ յերկու բառը կոմունիստնե-
րի, բանվորների, աշխատավորների միլիոնավոր մաս-

տաների, և բոլոր հարստահարված ժողովուրդների սրտերում ու մաքերում:

Մեզնից ընդմիջա հեռացավ նա, վոր հանդիսանում է ամենաթանկագինը, և անփոխարինելին համաշխարհային հեղափոխաշարժման մեջ:

Մեռավ Իլիչը...

Ընկերներ, նույն կսկիծ են պատճառում այդ խոսքերը նաև կոմունիստ յերիտասարգներին, ամբողջ բանվորագյուղացիական երիտասարդությանը, պրոլետարական հեղափոխության յերիտասարգ գվարդիային:

Մեռավ Լենինը...

Ծանր է մեզ—բոլոր կոմունիստների և աշխատավորների բազմավոր ապագայի պայքարողների համար, մեր առաջնորդի մահը նրանով ևս, վոր մեր առաջ կան շատ ու շատ հեղափոխական մարտեր, վճռական կռիվներ, չէ՛ վոր դեռևս յերկար է հեղափոխության փրոտ ճամբան, չէ՛ վոր մեր շուրջը դեռևս առամները կրճատացնելով վլխտում են արյունաբերու կապիտալիստների ժոհմակները, բանվորական գործի թշնամիները:

Այսուհետև առաջ պետք է գնանք մենք մենակ, առանց մեր մեծ առաջնորդի: Բայց հանճարեղ Իլիչը, թողեց մեզ հանճարեղ, հարուստ ժառանգություն իր ստեղծած պողպատի պես ամուր և հաստատուն: Կոմունիստական կուսակցությունը, կոմունիստական ինտերնացիոնալը, և իր ուսմունքը—Լենինիգամ. վորոնք սուր, հատու և հավատարիմ գեներեր են հեղափոխական դատակարգային պայքարի համար: Լենինը չկա, բայց կա, և անմահ է Լենինիգամը: Մեռավ առաջնորդը բայց կենդանի է նրա բանակը: Յեկ այդ բանակի վրա գըրվում է մեծ պատասխանավություն—հասցնել Իլիչի

գործն իր վերջնական հպատակին այն ճանապարհով վորով տանում եր իր բանակին նրա առաջնորդը, կենդանի ժամանակ:

Թանկագին Իլիչի լավագույն հիշատակը կը լինի բոլոր կոմունիստների, կոմունիստ յերիտասարգների, բանվորների և բոլոր աշխատավորների աննկուն աշխատանքը:

Ընկերներ, կոմսոմոլիստներ, և բանվորագյուղացիական յերիտասարգություն:

Մեր առաջ դեռևս շատ հեղափոխական կռիվներ կան, մեր առաջ ձգվում է զժվարին ճանապարհը, վորով մենք պետք է ընթանանք առանց մեր հանճարեղ առաջնորդի: Միայն ամուր սեղմելով մեր շարքերը՝ մեր կոմունիստական միության միջոցով պանծալի կոմկուսի շուրջը համախմբված՝ մենք կարող յինք իրականացնել Իլիչի պատգամները: Լենինի թողած ժառանգությունը Լենինիգամն յուրացնելով միայն, մենք կը կարողանանք հաղթությամբ ընթանալ պրոլետարական հեղափոխության զժվարին ճամբով:

Ընկերներ! համախմբվեցեք կոմունիստական կուսակցության շուրջը, արագությամբ դարձնե՛ք մեր շարքերում պողպատի պես ամուր հեղափոխականներ:

Աշխատենք անկուն այն գործի համար վորին իր ամբողջ կյանքը նվիրեց Իլիչը, եւ պատրաստ լինենք նոր եղափոխական կատաղի կռիվների—մեր մեծ առաջնորդի պատգամների համար:

Ռուսաստանի կոմերիսմիտայան անդրկովկասյան յերկրային կոմիտե:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ- ՆԵՐԸ

(Վ. Ի. Լենինի ճառը Ռուսաստանի Կոմերիտամիության III-րդ Համառուսական Համագումարում—1920
Թվի հոկտեմբերին) ♦

Ընկերներ, յես կը ցանկանայի պարզել ձեզ այսոր Կոմերիտամիության խնդիրները, և զրա հետ միասին այն հարցը, թե ի՞նչպիսի կազմակերպություն պիտի ունենա յերիտասարգությունը սոցիալիստական հանրապետության մեջ ընդհանրապես:

Այս հարցի վրա հարկավոր է կանգ առնել մանավանդ, վորովհետև, կարելի է ասել վորոշ տեսակետից, թե հենց յերիտասարգությունն է, վորին ստաջադրված է կոմունիստական հասարակություն ստեղծելու իսկական խնդիրը:

Պարզ է, վոր կապիտալիստական հասարակության ծոցում դատախարակված գործիչներին սերունդն ամենալավ զեպքում կարող է լուծել

շահագործման վրա հիմնված հին կապիտալիստական կենցաղի հիմքերի տապալման խնդիրը: Նա ամենալավ դեպքում կարող է լուծել այնպիսի հասարակական կազմ ստեղծելու խնդիրը, վորը կոգնի պրոլետարիատին և աշխատավոր դասակարգերին նախ պահել իշխանությունն իրենց ձեռքում, և յերկրորդ ստեղծել այնպիսի հաստատուն հիմք, վորի վրա կառուցել կարող է արդեն այն սերունդը, վորն աշխատանքի յե լծվում արդեն այնպիսի նոր պայմաններում, յերբ մարդկանց մեջ այլևս շահագործական հարաբերություն չկա:

Առանց ուսման կոմունիզմ չկա:

Այս տեսակետից մոտենալով յերիտասարդության խնդիրներին՝ պետք է ասեմ, վոր ընդհանրապես յերիտասարդության և մասնավորապես կոմունիստական յերիտասարդական միությունների և այլ կազմակերպությունների այդ խնդիրները կարելի է արտահայտել մի բառով. — սովորել:

Հասկանալի է, վոր այդ միայն «մի բառ է»: Նա դեռ պատասխան չի տալիս գլխավոր և ամենատեսական հարցերին — ինչ սովորել, և ինչպես սովորել, իսկ այստեղ ամբողջ խնդիրը հենց այն է, վոր հին կապիտալիստական հասարակության վերափոփոխման հետ միասին՝ կոմունիստական հասարակություն ստեղծող նոր սերունդներին

80-50051
1370
38

ուսումը, կրթությունն ու դաստիարակությունը չեն կարող հինը մնալ: Յերիտասարդության ուսումը, կրթությունն ու դաստիարակությունը պետք է առաջանա այն նյութից, վորը թողել է մեզ հին հասարակությունը:

Մենք կարող յենք կառուցել կոմունիզմը միայն գիտությունների կազմակերպությունների և հիմնարկների այն գումարից, մարդկային ուժերի և միջոցների այն պաշարից, վորոնք մնացել են մեզ հին հասարակությունից: Միմիայն արմատապես վերափոխելով յերիտասարդության ուսման գործը, նրա կազմակերպությունն ու կրթությունը՝ մենք կարող կը լինենք հասնել այն բանին, վոր յերիտասարդ սերնդի ջանքերով ստեղծվի հսից — բոլորովին նոր, այսինքն կոմունիստական հասարակություն:

Այդ պատճառով էլ հարկավոր է մանրամասն կանգ առնել այն հարցի վրա, թե ինչ պետք է ուսուցանենք յերիտասարդության, և ինչպես պետք է ուսանի այդ յերիտասարդությունը, յեթե նա ցանկանում է իրօք արդարացնել իր կոմունիստական յերիտասարդություն կոչումը: Պետք է պարզենք, թե ինչպես պետք է նախապատրաստենք յերիտասարդությանը, վորպես զի նա կարողանա ավարտել այն ստեղծագործությունը, վոր մենք յենք սկսել:



ԻՆՉ ՊԵՏԻ Ե ՍՈՎՈՐԵԼ

Պետք է ասեմ, վոր այդ հարցի առաջին և ամենաբնական պատասխանը, թվում է, այն պետք է լինի, թե յերիտամիությունը և ընդհանրապես այն ամբողջ յերիտասարդությունը, վորը ցանկանում է կոմմունիզմին անցնել, պետք է սովորի կոմմունիզմը:

Բայց այս պատասխանը. — «սովորել կոմմունիզմը» — շուտ ընդհանուր է: Ի՞նչ է պետք մեզ կոմմունիզմը սովորելու համար: Ի՞նչ պետք ընտրենք ընդհանուր գիտությունների գումարից՝ կոմմունիզմի գիտություն ձեռք բերելու համար: Այստեղ մի շարք վստահներ են ծառանում մեր առջև ամեն անգամ, հենց վոր կոմմունիզմ սովորելու խնդիրը սխալ յենք զնում, կամ յերբ չափազանց միակողմանի յենք մոտենում այդ հարցին:

Բնականաբար առաջին հայացքից իսկ մենք մտածում ենք, վոր սովորել կոմմունիզմը նշանակում է — յուրացնել գիտությունների այն գումարը, վորոնք կան կոմմունիստական գասագրքերում, գրքերում և գրքույկներում: Սակայն կոմմունիզմի ուսման այս վորոշումը շատ կոպիտ և անբավարար կը լինի:

Յեթե կոմմունիզմի ուսումնասիրությունը կայանար մի միայն գրքերում, գրքույկներում և

գրվածքներում եղածն յուրացնելու մեջ, ապա այդ դեպքում շատ հեշտությամբ մենք կոմմունիստական տիրացուներ և սնապարծներ ձեռք կը բերեյինք, իսկ այդ մեզ կը փաստեր ամեն քայլափոխում: Քանի վոր այդ մարդիկ սովորելով կոմմունիստական գրքերում ու գրքույկներում գրածները՝ անկարող կը լինեյին համախմբել այդ բոլոր գիտությունները և գործել այնպես, ինչպես պահանջում է իրոք կոմմունիզմը:

Մեկն ամենամեծ չարիքներից և դժբախտությունից, — դա դրքի և գործնական կյանքի կատարյալ անջատումն է: Մենք ունեյինք գրքեր, ուր ամեն ինչ նկարագրած էր ամենալավ գույներով. և այդ գրքերը մեծ մասամբ պարունակում են ամենազգվելի, կեղծավոր ստեր, վոր կեղծորեն պատկերացրել է մեզ կապիտալիստական հասարակությունը: Այդ պատճառով ել կոմմունիզմի մասին գրքերում եղածի սոսկ յուրացումը վերին աստիճանի սխալ կը լիներ:

Այժմ մեր ճառերում և հոդվածներում դուք չեք տեսնի այն ամենի սոսկ կրկնությունը, ինչ վոր առաջ սովում էր կոմմունիզմի մասին: Քանի վոր մեր ճառերն ու հոդվածները կապված են ամենորոյա և բազմակողմանի աշխատանքի հետ: Կոմմունիստական գրքերից ու գրքույկներից ձեռք բերած կոմմունիզմի գիտությունն

առանց աշխատանքի և առանց կուլի, վոչ մի ար-
ժեք չունի. քանի վոր նա շարունակել է տեսա-
կանի և գործնականի միջև եղած եյին անշատու-
մը: Այն հին անշատումը, վորը հին, բուրժուական
հասարակութեան ամենազգալի զիճն եր կազմում:

Ավելի վտանգավոր կը լինեք, յեթե մենք
սկսեյինք յուրացնել միմիայն կոմմունիստական
ըզուանգները: Յեթե մենք ժամանակին չհասկա-
նանք այդ վտանգը և յեթե մեր ամբողջ աշխա-
տանքը չուղղենք այդ վտանգը հեռացնելու, այդ
դեպքում այն կես միլիոն կամ մի միլիոն մար-
դիկ—յերիտասարդ տղաներն ու աղջիկները, վո-
րոնք կոմմունիզմն այդ ձևով սովորելուց հետո
լրենց կոմմունիստներ կանվանեն, մեծապես վսա-
տակար կը լինեն կոմմունիզմի գործին:

Հ Ի Ն Պ Գ Ր Ո Յ Ը

Այստեղ մեր առջև հարց է ծառանում. ինչ-
պես պետք է միացնենք այդ բոլոր կոմմունիզմի
ուսման համար:

Ի՞նչ պետք է վերցնենք հին դպրոցից, հին
գիտութեանից:

Հին դպրոցը հայտարարում եր, վոր ցանկա-
նում է ստեղծել բազմակողմանի զարգացած մարդ,
վոր գիտութեաններ եր տալիս ընդհանրապես:
Մենք գիտենք, վոր այդ բոլորովին սուտ եր,

քանի վոր ամբողջ հասարակութունը հիմնված
եր գասակարգերի—շահագործող և ճնշված դա-
սակարգերի—բաժանման վրա, և դրանով ել հենց
պահպանվում եր այդ հասարակութունը: Բնա-
կան է, վոր ամբողջ հին դպրոցը, սոցորված
լինելով ամբողջովին գասակարգային վոգով, գի-
տութուն եր տալիս միմիայն բուրժուազիայի
յերեխաներին: Նրա յուրաքանչյուր բառը կազ-
մած եր համաձայն բուրժուազիայի շահերի:

Այդ դպրոցներում բանվորների և գյուղա-
ցիների մատաղ սերնդին վոչ այնքան կրթում
եյին, վորքան միթագնում՝ նույն բուրժուազիայի
շահերի համար: Նրանց այն ձևով եյին կրթում,
վոր նրանցից բուրժուազիային հարկավոր ծառա-
ները պատրաստեն, վորոնք ընդունակ լինեյին
ոգուտ կամ շահ տալու բուրժուազիային և միա-
ժամանակ չըվրդովեյին նրա հանդիստն ու անդոր-
ծութունը: Այդ պատճառով ել բացսերով հին
դպրոցը, մենք նպատակ յենք դրել մեզ համար
վերցնել այդ դպրոցից միմիայն այն, ինչ վոր հար-
կավոր է մեզ իսկական կոմմունիստական կազմի
ստեղծելու համար:

Այստեղ յես շոշափելու եմ այն առարկու-
թեաններն ու մեղադրանքները հին դպրոցի հաս-
ցեյին, վոր շարունակ լսում յենք և վորոնք հա-

ճախ բոլորովին սխալ բացատրությունների են առաջնորդում մեզ:

Ասում են, վոր հին դպրոցը լոկ տիրացուկան, վարժության և անգիր սերտելու (зѣреж-ка) դպրոց էր: Այդ ճիշտ է, բայց պետք է կարողանանք տարբերել, թե հին դպրոցում ի՞նչն էր մեզ փաստակար և ի՞նչը — ոգտակար: Պետք է կարողանանք ընտրել հին դպրոցից այն, ինչ վոր անհրաժեշտ է կոմմունիզմի համար:

Հին դպրոցը տիրացուական դպրոց էր, նա ստիպում էր մարդկանց ահագին քանակությամբ անպետք, ավելորդ և մեռած գիտություններ յուրացնել: Այդ ավելորդ գիտություններով լցնում էլին աշակերտների գլուխները և յերիտասարդ սերունդը վերածում մի ընդհանուր չափի յենթարկած չլինովսիկների: Մակայն մենք մեծ սխալ գործած կը լինեյինք, յեթե այստեղից փորձեյինք եզրակացնել, թե կարելի յե կոմմունիստ դառնալ առանց յուրացնելու այն, ինչ վոր ավել է մարդկային գիտությունը: Սխալ կը լիներ կարծել, թե բավական է յուրացնել կոմմունիստական լոգունգները, կոմմունիստական գիտության եզրակացությունները, առանց յուրացնելու գիտությունների այն գումարը, վորոնց հետևանքն է հենց ինքը կոմմունիզմը:

Մարքսիզմն ամենալավ որինակն է, թե ի՞նչ-

պես երևան յեկավ կոմմունիզմը մարդկային գիտությունների գումարից:

ՄԱՐԿՍԻ ՈՒՍՄԱՆՆԵՐԸ

Դուք կարգացել և լսել եք, վոր կոմմունիստական տեսությունը, կոմմունիստական գիտությունը, ստեղծել է գլխավորապես Մարքսը: Թե ինչպես մարքսիզմի այդ ուսմունքը դադարել է մի մարդու, XIX դարու հանճարեղ սոցիալիստի ուսմունք լինելուց, և դարձել է ամբողջ աշխարհի միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր պրոլետարների ուսմունքը, վորոնք կիրառում են այդ ուսմունքը կապիտալիզմի դեմ վարած իրենց պայքարում:

Յեվ յեթե դուք մի այսպիսի հարց տաք — թե ինչու Մարքսի ուսմունքը կարողացավ գրավել ամենահեղափոխական դասակարգի միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր սրտերը — մի պատասխան միայն կարող եք ստանալ. այդպես յեզավ, վորովհետև Մարքսը հենվեց մարդկային գիտությունների հաստատուն հիմքի վրա: Այն գիտությունները, վոր ձեռք է բերված կապիտալիզմի որով, և վորոնք ուսումնասիրում են մարդկային հասարակության զարգացման որենքները: Մարքսը հասկացավ, վոր կապիտալիզմի զարգա-

ցումն անխուսափելիորեն տանում ե գեպի կոմ-
մունիզմ: Յեւ վոր գլխավորն ե, նա այդ ապա-
ցուցեց միմիայն կապիտալիստական հասարակու-
թյան հիման վրա. և այդ շրորհիվ այն հանգա-
մանքի, վոր նա լրիվ կերպով յուրացրել եր այն
ամենը, ինչ վոր տվել եր նախկին գիտությունը:

Այն բոլորը, ինչ վոր ստեղծել եր մարդկա-
յին հասարակությունը, Մարքսը վերամշակեց
քննադատության յենթարկեց՝ ստուգելով բան-
վորական շարժման միջոցով և այդպիսով հանեց
այն եզրակացությունները, վոր հանել չէին կա-
բողացել բուրժուական շրջանակներով սահմանա-
փակված կամ բուրժուական նախապաշրուսներով
կաշկանդված մարդիկ:

ՊՐՈԼԵՏԱՐԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Այդ պետք ե ի նկատի ունենալ, յերբ մենք
որինակ խոսում յենք պրոլետարական կուլ-
տուրայի մասին: Առանց պարզ կերպով ըմբռնե-
լու, վոր միայն մարդկության ամբողջ զարգաց-
ման շնորհիվ ստեղծված կուլտուրայի ճշգրիտ գի-
տությամբ, միայն այդ կուլտուրայի վերամշա-
կումով կարող յենք պրոլետարական կուլտուրա
կառուցել—մենք անկարող յենք լուծել այդ խն-
դիրը:

Պրոլետարական կուլտուրան մի անհայտ
տեղից վեր ընկած բան չե, վոչ ել այն մարդ-
կանց հնարածն ե, վորոնք իրենց պրոլետարական
կուլտուրայի մասնագետ են համարում: Դրանք
դատարկ խոսքեր են:

Պրոլետարական կուլտուրան պետք ե հան-
դես գա գիտության այն պաշարների որինաչափ
զարգացումով, վորոնք մշակված են մարդկու-
թյան ձեռքով կապիտալիստական հասարակու-
թյան, կալվածատիրական հասարակության և շի-
նովնիկական հասարակության լծի տակ:

Այդ բոլոր ճանապարհներն ու շափիղները
մեզ բերել, բերում և շարունակում են բերել դե-
պի պրոլետարական դիկտատուրա այնպես, ինչ-
պես և Մարքսի վերամշակած քաղաքատնտեսու-
թյունը ցույց ե տվել մեզ այն, ինչի վոր պետք
ե հասնի մարդկային հասարակությունը, ցույց ե
տվել մեզ անցումն դեպի դասակարկային կոիվ,
դեպի պրոլետարական ճեղափախության սկիզբը:

ՓԱՍՏԵՐԻ ԴՆՆԱԿԱՏԱԿԱՆ ՅՈՒՐԱՅՈՒՄԸ

Յերբ յերիտասարգության ներկայացուցիչնե-
նի և նոր կրթության մի քանի պաշապանները
կողմից հաճախ հարձակումներ յենք նկատում
հին դպրոցի դեմ, թե հին դպրոցը խալֆայա-

կան դպրոց եր և այլն, մենք նրանց առում յենք, վոր պետք է վերցնենք այդ հին դպրոցից այն բոլորը, ինչ վոր լավ է:

Մենք հին դպրոցից չպետք է վերցնենք այն, վոր յերիտասարդի հիշողությունը ծանրաբեռնում է անթիվ գիտություններով, վորոնց ինք տասերորդ մասն անպետք եր, մի տասերորդն ել աղճատված: Սակայն այդ չի նշանակում, թե մենք կարող յենք սահմանափակվել կոմմունիստական յեզրակացություններով և միայն կոմմունիստական յոգունգներ սովորելով: Դրանով կոմմունիզմ չես ստեղծի: Միայն այն ժամանակ կարող ես կոմմունիստ դառնալ, յերբ հիշողությունը կը հարստացնես այն բոլոր հարստությունների գիտությամբ, ինչ վոր մշակել ե մարդկությունը:

Մեզ տիրացուներ հարկավոր չեն. բայց մենք պետք է զարգացնենք և կատարելագործենք յուրաքանչյուր սովորողի հիշողությունը հիմնական փաստերի գիտությամբ. քանի վոր կոմմունիզմը դատարկությամբ և դատարկ ցուցանակ կը դառնա, իսկ կոմմունիստ ել մնապարծ, յեթե նրա գիտակցության մեջ մշակության չենթարկվեն ստացած բոլոր գիտությունները:

Դուք վոչ միայն պետք է յուրացնեք այդ գիտությունները, այլև պետք է այնպես յուրա-

ցնեք, վոր քննադատաբար վերաբերվեք այդ գիտություններին, վորպեսզի ձեր միտքը չծանրաբեռնեք անպետք իլլամով, և ընդհակառակը հարստացնեք ձեր միտքը այն բոլոր փաստերի գիտությամբ, առանց վորին չի կարելի ժամանակակից և կըթված մարդ լինել:

Յեթե կոմմունիստը մտածի պարծենալ կոմմունիզմով իր ստացած պատրաստի եզրակացությունների հիման վրա՝ առանց ամենալուրջ, դժվարին մեծ աշխատանքի, առանց փաստերը քննելու, վորոնց նա պարտավոր է քննադատաբար վերաբերվել. — ապա այդպիսի կոմմունիստը շատ խղճալի կը լինի: Յեվ այդպիսի մակերեսայնությունը միանգամայն կորստաբեր կը լինի: Յեթե համոզված եմ, վոր քիչ գիտեմ, յես կաշխատեմ ավելին գիտենալու. բայց յեթե վորև ե մեկը կասի, թե ինքը կոմմունիստ ե և կարիք չունի վոչինչ հաստատուն բան իմանալու, ապա այդպիսի մարդուց իսկի յեղ կոմմունիստ կամ նման բան դուրս չի կա:

ԳՆՏՍԱՅՍԱՆՆ ԳՆՏՅԵՊՈՒԿԱՍ

Հին դպրոցը կապիտալիստներին անհրաժեշտ ծառաներ եր պատրաստում: Հին դպրոցը գիտության մարդկանցից այնպիսի մարդիկ եր ստեղ-

կան դպրոց եր և այլն, մենք նրանց ասում յենք,
վոր պետք է վերցնենք այդ հին դպրոցից այն
բոլորը, ինչ վոր լավ է:

Մենք հին դպրոցից չպետք է վերցնենք այն,
վոր յերիտասարդի հիշողութիւնը ծանրաբեռ-
նում է անթիւ գիտութիւններով, վորոնց ինը
տասերորդ մասն անպետք եր, մի ասայերորդն
եւ աղճատված: Սակայն այդ չի նշանակում, թե
մենք կարող յենք սահմանափակել կոմմունիստ-
տական յեզրակացութիւններով և միայն կոմ-
մունիստական լոգունգներ սովորելով: Դրանով
կոմմունիզմ չես ստեղծի: Միայն այն ժամանակ
կարող ես կոմմունիստ դառնալ, յերբ հիշողու-
թիւնդ կը հարստացնես այն բոլոր հարստութիւն-
ների գիտութեամբ, ինչ վոր մշակել է մարդկու-
թիւնը:

Մեզ տիրացուներ հարկավոր չեն. բայց մենք
պետք է զարգացնենք և կատարելագործենք յու-
րաքանչյուր սովորողի հիշողութիւնը հիմնական
փաստերի գիտութեամբ. քանի վոր կոմմունիզմը
դատարկութեամբ և դատարկ ցուցանակ կը դառ-
նա, իսկ կոմմունիստ եւ անապարծ, յեթե նրա
գիտակցութեան մեջ մշակութեան չենթարկվեն
ստացած բոլոր գիտութիւնները:

Դուք վոչ միայն պետք է յուրացնենք այդ
գիտութիւնները, այլև պետք է այնպես յուրա-

ցնեք, վոր քննադատաբար վերաբերվեք այդ գի-
տութիւններին, վորպեսզի ձեր միտքը չծանրա-
բեռնեք անպետք խլամով, և ընդհակառակը հա-
րստացնեք ձեր միտքը այն բոլոր փաստերի գի-
տութեամբ, առանց վորին չի կարելի ժամանա-
կակից և կրթված մարդ լինել:

Յեթե կոմմունիստը մտածի պարծենալ կոմ-
մունիզմով իր ստացած պատրաստի եզրակացու-
թիւններին հիման վրա՝ առանց ամենալուրջ,
դժվարին մեծ աշխատանքի, առանց փաստերը
քննելու, վորոնց նա պարտավոր է քննադատա-
բար վերաբերվել. — ապա այդպիսի կոմմունիստը
չատ խղճալի կը լինի: Յեւ այդպիսի մակերեսայ-
նութիւնը միանգամայն կորստաբեր կը լինի:
Յեթե համոզված եմ, վոր քիչ գիտեմ, յես կաշ-
խատեմ ավելին գիտենալու. բայց յեթե վորև է
մեկը կասի, թե ինքը կոմմունիստ է և կարիք
չունի վոչինչ հաստատուն բան իմանալու, ապա
այդպիսի մարդուց իսկի յեւ կոմմունիստ կամ
նման բան դուրս չի կա:

ԿՈՏԱԿՅԱՆՆԵՆ ԿՈՅՆՊՈՒԿՆԱ

Հին դպրոցը կապիտալիստներին անհրաժեշտ
ծառաներ եր պատրաստում: Հին դպրոցը գի-
տութեան մարդկանցից այնպիսի մարդիկ եր ստեղ-

ծում, վորոնք պետք է գրեյին և խոսեյին այնպես, ինչպես կապիտալիստներն էյին ցանկանում: Նշանակում է, վոր մենք պետք է մեջ տեղից վերացնենք այդպիսի դպրոցը: Սակայն յեթե մենք պետք է նրան վերացնենք, քանդենք, միթե այդ նշանակում է, թե մենք չպետք է նրանից վերցնենք այն բոլորն, ինչ վոր անհրաժեշտ է մարդկանց և ամբարել է մարդկությունը:

Միթե այդ նշանակում է, թե մենք չպետք է կարողանանք զանազանել այն, ինչ վոր անհրաժեշտ յեղել կապիտալիզմի համար և այն, ինչ վոր անհրաժեշտ է կոմունիզմի համար:

Բուրժուական հասարակության մեջ մեծամասնության կամքի հակառակ կիրառվող հին ուսուցման փոխարեն մենք դնում յենք բանվորների և գյուղացիների զիտակցական դեսցրիպլինան: Վերջիններս դեպի հին հասարակությունն ունեցած իրենց ատելությանը միախառնում են իրենց վճռականությունը, կարողությունն ու պատրաստականությունը՝ միացնելու և կազմակերպելու իրենց ուժերն այդ կովի համար. վորպես զի միլիոնավոր և հարյուր միլիոնավոր քայքայված, ջլատված, հսկայական յերկրում ցրվ եկած կամքից ստեղծեն մի միաձույլ կամք, քանի վոր առանց այդ կամքի մենք անխուսափելիորեն կը ջախջախվինք: Առանց այդ համախմբման, առանց

բանվորները և գյուղացիները այդ զիտակցական դեսցրիպլինայի մեր գործն անհուսալի յե: Առանց դրան մենք չենք կարող հաղթել ամբողջ աշխարհի կապիտալիստներին և կարվածատերերին: Առանց դրան մենք չենք կարող նույն իսկ ամբարացնել հիմքը, ուր մնաց թե այդ հիմքի վրա կառուցենք նոր կոմունիստական հասարակություն:

Այդպես, բացասելով հին դպրոցը, միանգամայն իրավացի և անհրաժեշտ ատելություն տալով դեպի այդ հին դպրոցը, զնահատելով հին դպրոցը քայքայելու պատրաստակամությունը՝ մենք պետք է հասկանանք, վոր հին տիրացուական և խալիֆայական ուսուցման տեղը պետք է դնենք մի նոր բան: Այդ նոր բանն է—կարողանալ վերցնել մարդկային զիտությունների ամբողջ գումարը և այդպես վերցնել, վոր կոմունիզմը ձեզ համար մի ինչ վոր սովորած, անգիր բան չը դառնա, այլ՝ վորպես ձեր իսկ խորհածը, մտածածը, լինի ձեզ համար այնպիսի յեզրակացություններ, վորոնք անխուսափելի են ժամանակակից կրթության տեսակետից:

ՏԵՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՍԲԱՐՈՒԹՅԱՆ

Ահա այդպես պետք է դնել հիմնական խնդիրները, յերբ մենք խոսում յենք կոմունիզմն ուսանելու խնդրի մասին:

Վորպեսզի պարզեմ ձեզ այդ խնդիրը և բացատրեմ թե ի՞նչպես պետք է սովորել, կը վերցնեմ մի գործնական որինակ: Դուք բոլորդ ել գիտեք, վո՞ր այժմ մեր առաջին պատերազմական, այսինքն հանրապետութեան պաշտպանութեան խնդիրներից հետո գրված է տնտեսական խնդիրը:

Մենք գիտենք, վոր չի կարելի կոմունիստական հասարակութուն կառուցել առանց արդյունաբերութիւնն ու յերկրագործութիւնը վերակազմելու: Յե՛վ պետք է վերականգնել այդ վոչ հնի ձևով, այլ պետք է վերականգնել ժամանակակից, գիտութեան վերջին խոսքով կառուցած հիմունքի վրա: Դուք գիտեք, վոր այդ հիմքը յեկեկտրականութիւնն է: Յերբ ամբողջ երկրում տեղի կունենա յելիւարոֆիկացիա, երբ ելեկտրոկացիայի կենթակվեն արդյունաբերութեան և երկրագործութեան բոլոր ճյուղերը, յերբ դուք կը յուրացնեք այս հնդիրը, միայն այդ ժամանակ կարող եք կառուցել ձեզ համար այն կոմունիստական հասարակութիւնը, վոր չի կարող կառուցել հին սերունդը:

Ձեր առջև ծառայած է ամբողջ յերկրի տնտեսական վերածնութեան խնդիրը, յերկրագործութեան և արդյունաբերութեան վերակազմութիւնն ու վերականգնումը ժամանակակից տեխ-

նիկայով, վորի հիմքն է կազմում ժամանակակից տեխնիկայի գիտութիւնն ու յեկեկտրականութիւնը:

Դուք շատ լավ եք հասկանում, վոր ելեքտրոֆիկացիան անգրագետ մարդու բան չլի: Բացի գրանից հասարակ գրագիտութիւնն էլ շատ քիչ է այդ գործում: Այստեղ բավական չէ հասկանալ, թե ի՞նչ է յեկեկտրականութիւնը: Հարկավոր է իմանալ, թե ի՞նչպես պետք է տեխնիկայես գործադրել ելեքտրականութիւնը, թե արդյունաբերութեան, թե յերկրագործութեան և թե գրանց առանձին ճյուղերի վերաբերմամբ: Պետք է սովորեք այդ բանը ինքներդ, և սովորեցնեք այդ ամբողջ աշխատավոր մատաղ սերնդին:

Ահա մի խնդիր, վոր կանգնած է այժմ ամեն մի գիտակից կոմունիստի և ամեն մի յերիտասարդի առջև, ոչ իրեն կոմունիստ է համարում և պարզ հաշիվ է տալիս իրեն, վոր ինքը կոմերիտիութեան մեջ մտնելով հանձն է առել ոգնել կուսակցութեանը, կառուցել կոմունիզմը և ոգնել ամբողջ մատաղ սերնդին ստեղծելու կոմունիստական հասարակութիւն: Նա պետք է հասկանա, վոր միմիայն ժամանակակից կրթութեան հիման վրա կարող է ստեղծել այդ, և յեթե նա չունենա այդ կրթութիւնը, կոմունիզմը կը մնա միայն լոկ ցանկութիւն:

ԿՈՄՄՈՆԵՆՏՍԱԿԱՆ ՀԱՍՏԵՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒ-
ՅՈՒՄԸ

Հին սերնդի խնդիրն եր տապալել բուրժուազիային: Այն ժամանակ գլխավոր խնդիրն եր քըննադատել բուրժուազիային զարգացնել մասսաների ատելությունը դեպի բուրժուազիան, զարգացնել դասակարգային գիտակցությունը և աշխատել համախմբել իր ույժերը:

Նոր սերնդի առջև ավելի բարդ խնդիր եր դրված: Բավական չե, վոր դուք համախմբեք ձեր բոլոր ուժերը՝ պաշտպանել բանվորազյուզացիական իշխանությունը կապիտալիստների հարձակումից. այդ դուք պետք ե անեք. այդ շատ լավ եք հասկացել, այդ շատ պարզ կերպով ե պատկերացնում իրեն ամեն մի կոմունիստ, բայց դա բավական չե:

Դուք պետք ե կառուցեք կոմունիստական հասարակություն: Աշխատանքի առաջին մասը շատ տեսակետից արդեն իսկ արված ե: Հինը քանդված ե, ինչպես վոր հարկավոր եր քանդել: Այդ հինն այժմ ներկայացնում ե ավերակների մի կույտ. և հենց այդպես ել հարկավոր եր նրան ավերակների կույտի վերածել: Հողը մաքրված ե, և այդ մաքրված հողի վրա յերիտասարդ կոմունիստական սերունդը պետք ե կառուցի կոմունիստական հասարակություն:

Ձեր առջև դրված ե կառուցման խնդիրը, և դուք կարող եք լուծել այդ խնդիրը միմիայն տիրապետելով ամբողջ ժամանակակից գիտությանը, կարող լինելով կոմունիզմը պատրաստի սերտած ֆորմուլաներից, խորհուրդներից, ուսուցանելից, վորոշումներից ու ծրագրերից դարձնել մի կենդանի բան, վոր միացնի ձեր անսիջական աշխատանքը, դարձնի կոմունիզմը ղեկավար՝ ձեր գործնական աշխատանքի համար: Ահա ձեր խրնդիրը, վորով դուք պետք ե ղեկավարվեք կրթության, դատարակության և ամբողջ մատաղ սերնդի բարձրացման գործում: Դուք պետք ե լինեք կոմունիստական հասարակությունը կառուցող միլիոնավոր կառուցողներից առաջինը: Այն, ամեն մի յերիտասարդ տղա, ամեն մի ջահել աղջիկ, պետք ե լինի կոմունիստական հասարակության առաջին կառուցողը:

ԿՈՄՄՈՆԵՆՏՍԱԿԱՆ ԲՍՐՈՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այստեղ բնականաբար յես մտանում եմ այն հարցին, թե մենք ի՞նչպես պետք ե ուսուցանենք կոմունիզմը: Վերջն ե լինելու մեր գործադրած յեղենակների (պրիոմ) առանձնահատկությունը:

Յես այստեղ ամենից առաջ կանգ կառնեմ կոմունիստական բարոյականության վրա: Դուք պետք ե ձեզնից կոմունիստներ դատարակեք:

Յերիտասարդական Միութեան խնդիրն ե՛ այնպես
 դնել իր գործնական աշխատանքը, վոր սովորե-
 լով, կազմակերպվելով, համախմբվելով և կովե-
 լով կըթի իրեն և այն բոլորին, վոր հանձին այդ
 յերիտասարդութեան տեսնում ե իր առաջնորդը —
 վոր կոմմունիստներ դաստիարակի:

Հարկավոր ե, վոր ժամանակակից յերիտա-
 սարդութեան ուսման, կրթութեան և զարգացման
 ամբողջ գործը լինի այն, վոր նրա մեջ դաստիա-
 րակվի կոմմունիստական բարոյականութիւն:

Բայց կ՞արդյոք կոմմունիստական բարոյա-
 կանութիւն. ի հարկե այն: Հաճախ այնպես են
 պատկերացնում, իբր թե մենք մեր սեփական
 բարոյականութիւնը չունենք. և շատ հաճախ
 բուրժուազիան մեզ մեղադրում ե, իբր թե մենք
 կոմմունիստներս բացասում ենք ամեն մի բա-
 րոյականութիւն: Դա մի միջոց ե միայն հաս-
 կացութիւնները գլխիվայր շրջելու և թող փշելու
 բանվորների և գյուղացիների աչքերին:

Վճր բարոյականութիւնն ենք բացասում
 մենք: Ի հարկե այն բարոյականութիւնը, վոր
 քարոզում եր բուրժուազիան: Այդ տեսակետից
 մենք ի հարկե ասում ենք, վոր աստծուն չենք
 հավատում. և շատ լավ գիտենք, վոր աստծու
 անունից խոսում եր բուրժուազիան, խոսում եր
 հոգևորականութիւնը, խոսում եյին կալվածա-

տերերը, վորպեսզի իրականացնէին իրենց շա-
 հագործական շահերը: Նրանք երբեմն ել իրենց
 այդ բարոյականութիւնը փոխանակ բարոյագի-
 տութիւնից կամ աստվածային պատվիրաններից
 հանելու, հանում եյին իդեալիստական կամ
 կես-իդեալիստական ֆրագներից, վորոնք վերջին
 հաշիվով միշտ ել շատ նմանվում եյին աստվա-
 ծային պատվիրաններին:

Մենք բացասում ենք ամեն մի այդպիսի
 բարոյականութիւն, վոր վերցրած ե ապամարդ-
 կային և ապադասակարգային հասկացողութիւ-
 նից: Մենք ասում ենք, վոր այդ սուտ ե, վոր
 դա բանվորների և գյուղացիների մտքերի միա-
 գնումն ե՛ հոգուտ կալվածատերերի և կապիտա-
 լիստների:

Մենք ասում ենք, վոր մեր բարոյականու-
 թիւնը միանգամայն յինթարկված ե պրոլետա-
 րիատի դասակարգային կովի շահերին: Մեր բա-
 րոյականութիւնը զուրա ենք բերում պրոլետա-
 րիատի դասակարգային կովի շահերից:

Հին հասարակութեան հիմքը կազմում եր
 բանվորների և գյուղացիների շահագործումը. —
 կալվածատերերի ու կապիտալիստների կողմից:
 Մեզ հարկավոր եր քանդել և տալալել այդ,
 բայց զրա համար հարկավոր են ստեղծել միու-

թյուն, համախմբում. իսկ աստված այդպիսի միություն չէր ստեղծի:

Այդպիսի միություն կարող էլին տալ միայն գործարաններն ու ֆաբրիկաները, միմիայն պրոլետարիատը, այն ել սովորած և հին քնից արթնացած պրոլետարիատը: Միայն այն ժամանակ սկսվեց մասսայական շարժումը, յերբ առաջ յեկավ այդ դասակարգը: Նա մեզ հասցրեց այն բանին, ինչ վոր տեսնում ենք այժմ—պրոլետարական հեղափոխության հաղթանակին ամենաթույլ յերկրներին մեկում, վոր յերեք տարի ե ինչ պաշտպանում ե իրեն ամբողջ աշխարհի բուրժուազիայի գրոհից:

Մենք տեսնում ենք, թե ինչպես ե պրոլետարական հեղափոխությունն աճում ամբողջ աշխարհում: Մենք այժմ ասում ենք փորձի հիման վրա, վոր միմիայն պրոլետարիատը կարող եր այդպիսի համախմբված ույժ ստեղծել, վորի հետևից գնում ե բաժան - բաժան յեղած պյուզացությունը, վոր զիմադրեց շահագործողների բոլոր հարձակումներին: Միայն այդ դասակարգը, բոլոր հարձակումները կարող ե ոգնել աշխատախիսն պրոլետարիատը կարող ե ոգնել աշխատավոր մասսաներին միանալու, համախմբվելու, և վերջնականապես պաշտպանելու, վերջնականապես ամբացնելու կոմունիստական հասարա-

կությունը, վերջնականապես կառուցելու այդ հասարակությունը:

Ահա թե ինչու յենք մենք ասում, թե մարդկային հասարակությունից դուրս բարոյականություն գոյություն չունի մեզ համար. դա խաբեբայություն ե: Մեզ համար բարոյականությունը յենթակա ե պրոլետարիատի դասակարգային կռիվին:

ԳՍԱՍԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՎ,

Իսկ ի՞նչ ե այդ դասակարգային կռիվը.— տապալել ցարին, տապալել կապիտալիստներին, վոհնչացնել կապիտալիստների դասակարգը:

Իսկ ի՞նչ ե դասակարգն ընդհանրապես: Այդպիսի ե, վոր թույլ ե տալիս հասարակության մի մասին յուրացնել մյուս մասի աշխատանքը:

Յեթե հասարակության մի մասը յուրացնում ե ամբողջ հողը, — մեր առջև տեսնում ենք կալվածատերերի և դյուրացիների դասակարգ: Յեթե հասարակության մի մասն ունի ֆաբրիկաներ ու գործարաններ, ակցիաներ և կապիտալներ, իսկ մյուս մասն աշխատում ե այդ գործարաններում ու մեր առջև տեսնում յենք պրոլետարներին և կապիտալիստների դասակարգ:

Դժվար չէր ցարին քշել—դրա համար հերիք եր մի քանի որը: Շատ դժվար չէր քշել

կալվածատերերին— դրա համար հարկավոր եր մի քանի ամիս. շատ դժվար չե նաև քշել կապիտալիստներին:

Սակայն անհամեմատ ավելի դժվար ե վոչընչացնել դասակարգը: Այնուամենայնիվ դեռ մնում ե հասարակութայն բաժանումը՝ բանվորների ե գյուղացիների: Յեթե գյուղացին նստած ե իրեն առանձին հողամասի վրա ե յուրացնում ե ավելորդ հացը, այսինքն այն հացը, վորը վոչ իրեն ե հարկավոր, վոչ ել իր անասուններին. իսկ մյուս բոլորը մնում են առանց հացի, ապա այդ գյուղացին դառնում ե շահագործող: Վորքան շատ հաց պահի իր մոտ, այնքան ավելի շահավետ կը լինի իր համար, իսկ մյուսները թող քաղցած մնան (վորքան շատ քաղցած լինեն, այնքան նա իր հացը թանգ կը ծախի):

Հարկավոր ե, վոր բոլորն ել աշխատեն մի ընդհանուր ծրագրով, ընդհանուր հողի վրա, ընդհանուր ֆաբրիկաներում ու գործարաններում ե ընդհանուր կարգ ու կանոնով: Սակայն հեշտ ե այդ Դուք տեսնում եք, վոր այդտեղ արդեն այնպես հեշտությամբ չի կարելի լուծել այդ հարցը, ինչպես վոր ցարի, կալվածատերերի ե կապիտալիստների դուրս քշելն եր: Այստեղ հարկավոր ե, վոր պրոլետարիաար վերակրթի, վերագաստիարակի գյուղացիների մի մասին, առաջ քաշի նրանց, վո-

րոնք աշխատավոր գյուղացիներ են, վորպեսզի վոչընչացնի այն գյուղացիների ընդդիմադրությունը, վորոնք հարուստ են ե զրպանները լցնում են ի հաշիվ մնացածների կարիքի:

Նշանակում ե, պրոլետարիատի կովի խընդիրը դեռ չենք ավարտել տապալելով ցարին ե քշելով կալվածատերերին ու կապիտալիստներին: Իսկ դրա մեջ ե հենց այն իրավակարգի խնդիրը, վոր մենք պրոլետարիատի դիկտատուրա յենք անվանում: Դասակարգային կռիվը շարունակվում ե: Նա միայն փոխել ե իր ձևերը: Սա պրոլետարիատի դասակարգային կռիվն ե նրա համար, վոր այլևս վերագառնալ չկարողանան հին շահագործողները, վոր բաժան - բաժան եղած հետագործողները, վոր բաժան - բաժան եղած հետագյուղացուցուցունը միանա ե կաղմի մի միություն: Դասակարգային կռիվը շարունակվում ե, ե մեր խնդիրներն են— բոլոր շահերը յենթարկել այդ կովին:

Յեվ մենք մեր կոմմունիստական բարոյականությունը յենթարկում ենք այդ խնդրին: Մենք ասում ենք. — բարոյականությունն այն ե, ինչ վոր ծառայում ե հին շահագործող հասարակությունը տապալելուն, ե բոլոր աշխատավորների համախմբելուն պրոլետարիատի շուրջը, վոր ստեղծում ե կոմմունիստների նոր հասարակություն:

Կոմմունիստական բարոյականութիւնն այն է, վոր ծառայում է այդ կովին, վոր միացնում է աշխատավորներին ամեն տեսակի շահագործութեան դեմ, ամեն տեսակի մանր սեփականութեան դեմ. բանի վոր մանր սեփականութիւնը մի մարդու ձեռքն է տալիս այն, ինչ վոր ստեղծված է ամբողջ հասարակութեան աշխատանքով:

Հողը մեզնում ընդհանուր սեփականութիւն է համարվում:

Իսկ յեթե այդ ընդհանուր սեփականութիւնից յես վերցնում եմ մի կտոր իբրև սեփականութիւն, կրկնապատիկ ավելի հացահատիկ եմ մշակում այդ հողի վրա, քան թե ինձ հարկավոր է, և ավելորդը ծախում եմ շահագրտական նպատակով, ապա այսպես եմ դատում. — վորքան քաղցածներին թիվը շատ լինի, այնքան էլ ավելի գին կը տան իմ հացին: Մի՞թե այդ դեպքում ես իբրև կոմմունիստ եմ վարվում:

Ի հարկե վոչ, յես այդ դեպքում ընդհակառակը վարվում եմ վորպես շահագործող, վորպես սեփականատեր: Դրա դեմ անշուշտ պետք է կռիվ մղել:

Յեթե այդպես թողնենք այդ, ապա ամեն ինչ նորից հետ կը գլորվի դեպի կապիտալիստները

իշխանութիւնը, բուրժուազիայի իշխանութիւնը, ինչպես վոր այդ պատահել է մի քանի անգամ նախկին հեղափոխութիւններին ժամանակ: Յեւ վորպեսզի թույլ չտանք կապիտալիստներին ու բուրժուազիայի իշխանութիւնը նորից վերականգնի, դրա համար հարկավոր է վոր չարչիութիւն թույլ չտանք, հարկավոր է, վոր առանձին անհատներ չհարստանան ի հաշիվ մնացածների, հարկավոր է, վոր աշխատավորները ձուլվեն պրոլետարիատի հետ, և կազմեն կոմմունիստական հասարակութիւն:

Հենց այս է կոմմունիստական Յերիտասարդութեան Միութեան և կազմակերպութեան հիմնական խնդրի առանձնահատկութիւնը:

Հին հասարակութիւնը հիմնված էր այնպիսի սկզբունքի վրա, վոր կամ դու եյիր կողոպտում մյուսին, կամ նա եր քեզ կողոպտում, կամ դու եյիր ուրիշի համար աշխատում, կամ նա եր քեզ համար աշխատում, կամ ստրկատեր եյիր, կամ ստրուկ: Հասկանալի յե, վոր այդպիսի հասարակութեան ծոցում կրթված մարդիկ, կարելի յե ասել, մոր կաթի հետ միասին յուրացնում են այդ հողերանութիւնը, սովորութիւնը, հատկացողութիւնը — կամ ստրկատեր կամ ստրուկ, կամ մանր սեփականատեր, մանր ծառայող, հասարակ պաշտոնյա, ինտելիգենտ. մի խոսքով մի մարդ,

վում: Այդ կռվի մեջ նա իսկական կոմմունիստներ ե գաստիարակում: Այդ կռվին պիտի յենթարկի նա և նրա հետ կապի իր ուսման, կրթության և գաստիարակության ամեն մի քայլը:

Կոմմունիստական յերիտասարգության կրթությունը նրանում չպետք է կայանա, վոր մենք նրան մատուցենք ամեն տեսակ հաճոյական ձառեր և բարոյականության կանոններ: Կրթությունն այդ չէ:

Յերբ մարդիկ տեսան թե ինչպես են իրենց հայրերն ու մայրերն ապրում կալվածատերերի և կապիտալիստների լծի տակ, յերբ նրանք անձամբ մասնակցել են այն տանջանքներին, վորոնք թափվում եյին շահագործողների դեմ կռիվ սկսողների գլխին, յերբ նրանք տեսան արդեն, թե ինչ գնով ու զոհաբերությամբ եյին շարունակում այդ կռիվն իրենց նվաճումները պաշտպանելու համար, թե վորքան կատաղի թշնամիներ են հանդիսանում կալվածատերերն ու կապիտալիստները, — այդ բոլորը տեսնելուց հետո այդ մարդիկ մեր պայմաններում գաստիարակվում են արդեն վորպես կոմմունիստ:

Կոմմունիստական բարոյականության հիմքը կազմում է կոմմունիզմի ամբացման և ավարտման համար մղվող կռիվը: Ահա թե վորն է նաև կոմմունիստական կրթության, գաստիարակու-

թյան և ուսման հիմքը: Ահա թե վորն է այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է կոմմունիզմը սովորել:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՁԵՐԵՍՍՍՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մենք չենք հավատա ուսման, կրթության և գաստիարակության, քանի դեռ բանվորներն ու գյուղացիները ճնշված կը մնան կապիտալիստների և կալվածատերերի կողմից, քանի դեռ դպրոցները կը մնան կալվածատերերի և կապիտալիստների ձեռքին, յերիտասարգ սերունդը կը մնա կույր ու խավար:

Իսկ մեր դպրոցը պետք է յերիտասարգությանը տա գիտության հիմունքները. իրենց իսկ միջոցով կոմմունիստական հայացքները մշակելու ունակություն: Մեր դպրոցը պետք է նրանցից ստեղծի կրթված և զարգացած մարդիկ: Մեր դպրոցը պետք է հենց ուսման ընթացքում, յերբ աշակերտներն այնտեղ դեռ սովորում են, ստեղծի նրանցից ազատագրման պայքարի մասնակցողներ ընդդեմ շահագործողների. վորովհետև դուք շատ լավ գիտեք, վոր քանի դեռ Ռուսաստանը մնում է միակ բանվորական հանրապետությունը, իսկ մնացած ամբողջ աշխարհում տիրում են հին բուրժուական կարգերը, — մենք

ավելի թույլ ենք նրանցից, և ամեն անգամ մեզ նոր հարձակումն է սպառնում: Մենք կը հաղթենք հետագա կովում և ամրանալով կը դառնանք իրոք վոր անհաղթելի միայն այն ժամանակ, յերբ կը սովորենք համախմբվել և միաբան գործել:

Այսպիսով կոմմունիստ լինել— այդ նշանակում է կազմակերպել և միացնել ամբողջ յերրտասարդ սերունդը և կըթուփյան ու զիսցիպլինայի որինակ տալ հենց այդ կովում: Այդ ժամանակ միայն դուք կարող կը լինեք սկսել և ավարտել կոմմունիստական հասարակության շենքը:

ԻՆՉ Ե ՆՇՍ.ՆՍ.ԿՈՒՄ ԿՈՄՄՈՆԻՍՏ

Վորպեսզի ասածներս պարզ լինի բոլորիդ համար, կը գիմեմ որինակի: Մենք մեզ կոմմունիստ ենք անվանում:

Սակայն ի՞նչ է նշանակում կոմմունիստ:

Կոմմունիստ՝ լատինական բառ է: Կոմմունիստ նշանակում է ընդհանուր: Կոմմունիստական հասարակություն նշանակում է՝ ամեն ինչ ընդհանուր է— հողը, գործարանները, ընդհանուր աշխատանքը— անա թե ինչ է կոմմունիզմը:

Կարո՞ղ է արդյոք աշխատանքն ընդհանուր լինել, յեթե ամեն մեկն առանձին իր սնտեսությունը, իր առանձին հոգսմասն ունենա: Միան-

դամից ընդհանուր աշխատանք չի կարելի ստեղծել:

Դա յերկնքից չի ընկնում: Հարկավոր է աշխատել, տանջվել և ստեղծել. դա ստեղծվում է կովի ընթացքում: Այդտեղ խոսքը մի հին գրքույկի չի վերաբերում. գրքույկին վոչ վոք չեր հավատում: Այդտեղ սեփական կենսական փորձն է:

Յերբ Կալչակն ու Դենիկինը գալիս էյին Սիբիրից ու հարավից, գյուղացիները նրանց կողմն էյին: Բալչեիզմը նրանց՝ այդ գյուղացիներին գուր չեր գալիս, վորովհետև բալչեիկները նրանց հացը վերցնում էյին ամուր գներով: Բայց յերբ նույն գյուղացիները Սիբիրում և Ուկրայնիայում Կալչակի և Դենիկինի իշխանության համը տեսան, իմացան, վոր գյուղացության համար ուրիշ ընտրություն չկա. կամ պետք է զիմեն կապիտալիստին, վոր նրանց իբրև սարուկ կը հանձնի կալվածատիրոջը, կամ գնան բանվորի յետևից, վոր, ճիշտ է, կաթի և մեղրի աղբյուրներ չի խոստանում նրան, և յերկաթե զիսցիպլինա ու հաստատուն կամք է պահանջում գժվարին կովում, բայց միայն այդ բանվորն է, վոր ազատելու է գյուղացուն կալվածատիրոջ և կապիտալիստի ստրկական լծից:

Յերբ նույնիակ խավար գյուղացիները հասկացան և տեսան այդ իրենց սեփական փորձով,

այն ժամանակ նրանք դարձան գիտակից, դժվարին դպրոց անցած կոմմունիզմի կողմնակիցներ: Հենց այդպիսի փորձը պետք է կազմի կոմերիտ-միութեան ամբողջ գործունեյութեան հիմքը:

Յես արդեն պատասխանեցի այն հարցին, թե ինչ պետք է մենք սովորենք, ինչ պետք է վերցնենք հին դպրոցից, հին գիտութիւններից: Այժմ ել կաշխատեմ պատասխանել այն հարցին, թե ինչպես պետք է սովորենք այդ,—միմիայն սերտորեն կապելով մեր դպրոցական գործունեյութեան, մեր կրթութեան, ուսման և դաստիարակութեան ամեն մի քայլը բոլոր աշխատավորների կովի հետ ընդգեմ շահագործողների: Ահա այդ հարցի պատասխանը:

ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՐ

Յերիտասարդութեան վորես կազմակերպութեան աշխատանքից վերցրած մի քանի որինակներով յես ձեզ շոշափելի կերպով ցույց կը տամ, թե ինչպես պետք է առաջ ընթանա կոմմունիզմի այդ կրթութեանը:

Բոլորն ել խոսում են անգրագիտութեան վերացման մասին: Դուք գիտեք, վոր անգրագետ յերկրում չի կարելի կոմմունիստական հասարակութեան շենք կառուցել: Բավական չե, վոր խորհրդային իշխանութեանը հրամայի կամ կուսակ-

ցութեանը վորոշ լոգուեք տա, կամ ամենալավ աշխատավորները մի մասը լծի այդ աշխատանքին: Դրա համար հարկավոր է, վոր ինքը յերիտասարդ սերունդը ձեռք գարկի այդ գործին:

Կոմմունիզմը հենց նրա մեջ է կայանում, վոր այն յերիտասարդութեանը, այն ջանել տղաներն ու աղջիկները, վորոնք Յերիտասարդական Միութեան անդամ են, ասում են. «Այդ մեր գործն է, մենք կը միանանք, կը գնանք գյուղերը, վորպեսզի վերջ տանք անգրագիտութեանը, վորպեսզի մեր յերիտասարդ սերնդի շարքերում այլևս անգրագետներ չլինեն»: Մենք ձգտում ենք, վոր յերիտասարդ սերնդի ինքնագործունեյութեանը նվիրված լինի այդ գործին:

Դուք գիտեք, վոր չի կարելի շուտափույթ խավար ու անգրագետ Ռուսաստանը դարձնել գրագետ յերկիր: Բայց յեթե այդ գործն իր վրա վերցնի Յերիտասարդական Միութեանը, յեթե ամբողջ յերիտասարդութեանն աշխատի հսկում բոլորի, այն ժամանակ 400,000 ջանել ադա ու աղջիկ ընդգրկող այդ միութեանն իրավունք կունենա կոչվել՝ Կոմմունիստ. Յերիտ. Միութեան: Միութեան ինքիքն է նաև այն, վոր նա յուրացնելով այս կամ այն գիտութեանը՝ ոգնի այն յերիտասարդութեանը, վոր ինքն իրեն չի կարող ազատագրվել անգրագիտութեան խավարից:

Յերիտասարդ. Միութեան անդամ լինել՝ նշա-
նակում է գործն այնպես տանել, վոր նա իր աշ-
խատանքը, իր ույժերը նվիրի ընդհանուր գործին:
Ահա հենց դա է կոմմունիստական կրթութիւնը:
Միայն այդպիսի աշխատանքի ընթացքում է,
վոր յերիտասարդ տղան կամ աղջիկը գտնուում
է իսկական կոմմունիստ: Միայն այն դեպքում
են նրանք գտնուում կոմմունիստ, յերբ իրենց
այդ աշխատանքով կարողանում են գործնական
հաջողութիւններ ձեռնարկել:

Իբրև որինակ վերցրեք քաղաքամերձ բան-
ջարանոցների աշխատանքը: Դա կոմերիտմիու-
թեան խնդիրներից մեկն է: Ժողովուրդը քաղ-
ցած է: Գործարաններում և ֆաբրիկաներում
տով է: Սովից փրկվելու համար պետք է զար-
գացնել բանջարանոցային գործը, այն ինչ յեր-
կրագործութիւնը տարվում է հին ձևով:

Բայց հարկավոր է, վոր ավելի գիտակից սար-
բերը ձեռք գարկեն այդ գործին, և դուք այն
այն ժամանակ կը տեսնեք, վոր բանջարանոց-
ները շատանում են, նրանց մակարդակն ընդլայն-
վում և ավելի լավ արդյունք է տալիս: Այս գոր-
ծում կոմերիտմիութիւնը պետք է գործն մաս-
նակցութիւն ունենա: Յուրաքանչյուր միութիւն
կամ միութեան յուրաքանչյուր բճիճ պետք է
այդ գործը համարեն իրենց սեփական գործը:

Կոմերիտմիութիւնը պետք է հարվածա-
յին խումբ լինի, վոր ամեն աշխատանքի ոգ-
թեան է հասնում, իր նախաձեռնութիւնն է ար-
տահայտում, իր ձեռներեցութիւնը: Միութիւնն
այնպես պետք է լինի, վոր ամեն մի բանվոր
նրա մեջ տեսնի այնպիսի մարդիկ, վորոնց ուս-
մունքը գուցէ և նրան անհասկանալի, գուցէ
միանգամից անհավատալի թվա, բայց նրանց
աշխատանքից և գործունեութիւնից տեսնէ և
համոզվի, վոր զրանք իրոք այն մարդիկն են, վո-
վոնք իրեն ուղիղ ճանապարհ են ցույց տալիս:

ՅԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեթե կոմերիտմիութիւնը իր գործունեյու-
թեան բոլոր շրջաններում չկարողանա աշխա-
տանքն այդ ձևով տանել, նշանակում է, վորնա
սայթաքում է դեպի հին բուրժուական ուղին:

Մեր կրթութիւնը պետք է միացնենք աշ-
խատավորների կուլին շահագործողների դեմ,
վորպեսզի ողնենք աշխատավորութեանը լուծելու
այն խնդիրները, վորոնք բոլորում են կոմմու-
նիզմի ուսմունքից:

Միութեան ամգամները պետք է իրենց յու-
րաքանչյուր ազատ ժամը նվիրեն բարեկալելու
վորէ բանջարանոց կամ կազմակերպելու գործա-

բաններում ու ֆարբիկաներում յերիտոսարգու-
թյան ուսման գործը կային:

Մենք ցանկանում ենք աղքատ և մերկ
Ռուսաստանը դարձնել հարուստ յերկիր. դրա
համար հարկավոր է, վոր Կոմերիտմիությունը
իր կրթությունը, ուսումնս ու դաստիարակու-
թյունը միայնի բանվորների և գյուղացիների
աշխատանքին, վոր նա չպարփակվի իր դպրոց-
ներում և չսահմանափակվի միայն կոմմունիստա-
կան գրքեր ու գրքույկներ կարդալով:

Միայն բանվորների և գյուղացիները հեռ
համատեղ աշխատանք տանելով կարելի է դառ-
նալ իսկական կոմմունիստ: Յեվ հարկավոր է,
վոր բոլորն ել տեսնեն, թե Յերիտմիության մեջ
մտնող ամեն մի յերիտասարգ գրագետ է, և դրա
հետ միասին կարողանում է նաև աշխատել:
Յերբ բոլորն ել կը տեսնեն, թե ինչպես մենք
հին գպրոցից դուրս ենք քշել հին խալիֆայու-
թյունը և նրա տեղը դրել գիտակցական զխսցիպ-
լինա, թե ինչպես ամեն մի յերիտասարգ մաս-
նակցություն է ցույց տալիս շաքաթորյակներին,
թե ինչպես յերիտասարգությունն սգտագործում
է քաղաքամերձ անտեսությունը՝ ազդաբնակչու-
թյան սգնած լինելու համար, այն ժանանակ
ժողովուրդը կըսկսի աշխատանքի վրա ուրիշաչ-
քով նայել, քան նայում եր մինչև այժմ:

Կոմերիտմիության խնդիրն է սգնություն
կազմակերպել այդ գործում գյուղերում կամ ի-
րենց քաղաքամասերում: Կը վերցնեմ մի փոկ-
րիկ որինակ՝ մաքրության կամ մթերքի բաշխման
հարցը:

Ի՞նչպես եր կատարվում այդ կապիտալիստա-
կան հին հասարակության մեջ: Ամեն մեկն աշ-
խատում եր միայն իր համար, և վոչ վոք չեր
նայում, թե կան այդտեղ սրգյոք ծերունիներ
կամ հիվանդներ, կամ ամբողջ անտեսության
ծանրությունը շի՛ ընկնում սրգյոք կանանց ու-
սերին, վորոնք հենց այդ պատճառով ել ճնշված
և շահագործված վիճակում են սպրում:

Ո՞վ պետք է կովի դրա դեմ: Ի հարկե Յերիտ-
միությունները, վորոնք պետք է սսեն. «Մենք
այդ կը կարգավորենք, մենք կը կազմակեր-
պենք յերիտասարգների խմբեր, վորոնք կոգնեն
մաքրություն պահանջելու կամ մթերքներ բաշ-
խելու գործին՝ սիստեմատիկաբար այցելելով
աները: Նրանք կը գործեն կազմակերպված
ձևով հոգուտ ամբողջ հասարակության՝ ճշտորեն
բաշխելով ույժերը և ցույց տալով, վոր աշխա-
տանքը պետք է լինի կազմակերպված:

ԱՊՍՏՈՒՆ ԶԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅԱՆ Ե ՊՍՏԱՆ-
ՆՈՒԾ

Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն արդեն իրենց կյանքի 50 տարին են բոլորում, չի կարող հույս ունենալ, թե կը տեսնի կոմմունիստական հասարակութուն: Մինչև այդ՝ նա կը մեռնի: Իսկ այն սերունդը, վոր բաղկացած է այժմ 15 տարեկաններից, նա կը տեսնի կոմմունիստական հասարակութուն, և հենց ինքը կը կառուցի այդ հասարակութունը: Յե՛վ նա պետք է իմանա, վոր իր կյանքի ամբողջ խնդիրը — այդ հասարակության կառուցումն է: Հին հասարակության մեջ աշխատանքը տարվում էր առանձին ընտանիքների ձեռքով, և վոչ վոք չէր միացնում այդ աշխատանքը՝ բացի ժողովրդական մասսաները ճնշող կապիտալիստներից ու կալվածատերերից: Մենք պետք է ամեն աշխատանք, վորքան էլ կեղտոտ ու ծանր լինի այն, այնպես գնենք, վոր յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի նայի իր վրա հետևյալ ձևով. — Յես մի մասնիկն աղատ աշխատանքի հսկա բանակի և կարող եմ ինքս կառուցել եմ կյանքն առանց կալվածատերերի ու կապիտալիստների, կարող եմ կոմմունիստական կարգ սահմանել:

Հարկավոր է, վոր կոմերիտիստները դաս-

տիարակի բոլորին՝ դեռ վոքը հասակից զիտակից և դիսցիպլինայի յենթարկված աշխատանքի մեջ: Ահա թե ինչ ձևով մենք կարող ենք հուսալ, թե մեր առջև դրված խնդիրները կերպարծվեն: Պետք է ի նկատի ունենանք, վոր մեզ առնվազն 10 տարի է հարկավոր յերկիրը յելեքարոֆիլիացիայի հենթարկելու համար, վորպեսզի մեր սպառաացած հողը կարողանանք սպասարթել տեխնիկայի վերջին խոսքի համաձայն:

Յե՛վ ահա այն սերունդը, վոր բաղկացած է 15 տարեկաններից և 10—20 տարի հետո ապրելու է կոմմունիստական հասարակության մեջ, պետք է իր ուսման բոլոր խնդիրներն այնպես դնի, վոր յուրաքանչյուր սր վորևե գյուղում, վորևե քաղաքում յերիտասարդութունը լուծի գործնականապես ընդհանուր աշխատանքի այս կամ այն թեկուզ ամենափոքրիկ, ամենահասարակ խնդիրը:

Վորչափ այդ գործը տեղի կուենա ամեն մի գյուղում, վորչափ զարկ կըստանա կոմմունիստական մրցակցութունը, վորչափ այդ յերիտասարդութունը կարող կը լինի միայնել իր աշխատանքը, այնչափ էլ սպանովված կը լինի կոմմունիստական շինարարության հաջողութունը:

Կոմերիտիստները միայն հետևելով իր ս-

ևնն մի քայլին այդ շինարարութեան հաջողու-
 թեան անսակեալից, միայն հարց տալով իրեն, —
 արե՞լ ենք արդո՞ք ամեն ինչ միացած գիտակից
 աշխատավորներ լինելու համար, — կըստեգծի իր
 մտա կես միլիոն անդամներից աշխատանքի միա-
 ցյալ մի բանակ և ընդհանուր հարգանք կը դրավի
 դեպի իրեն:

(Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page)



(Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page)

3n

2013

« Ազգային գրադարան »



9 70 NL0033190

